ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ - Մայիսի 7ի կէսօրին, Նոյեմբերեանի Ոսկեպար գիւղից, որը վերջին օրերին գտնւում է խորհրդային զօրքերի շրջափակման մէջ, դուրս են բերուել 13 զոհուած հայորդիներ: Նրանցից 10ը Նոյեմբերեանի ոստիկաններ են, մէկը՝ Կիրովականի երկրապահ վաշտից, 2ը՝ Աշտարակի երկրապահ ջոկատի մարտիկներ: Գիւղից անյայտ կորել են մօտ 20 մարդ: Վիրաւորների թիւը հասնում է տասնեակների: Շրջափակումը շարունակւում է: Ոսկեպար գիւղ է ժամանել Ռուսաստանի Գերագոյն խորհրդի պատգամաւորների մի խումբ: Պատգամաւորների մէկ այլ խումբ գտնւում է Բերդաւանում:

Դեսանտ է իջեցուել Բարեկամաւան եւ Բերդաւան գիւղերում: Պայթեցուել է Կատար սարի զազաթին գտնուող հեռուստաաշտարակը:

Ոսկեպարի (հայկական) եւ Ներքին Աքսիպար (ադրբեջանական) գիւղերի շրջակայքում դիրքաւորւում են դեսանտային զօրքերը:

ԿԱՊԱՆ - Ժամը 12:00: Առաւօտից սկսած շրջանի սահմանամերձ Դաւիթ Բէկ, Կաղնուտ, Ուժանիստ եւ մնացած գիւղերում յայտնուել են դեսանտային զօրքեր, որոնց գործողութիւնները ապահովում են գիւղերի վրայ թռչող ուղղաթիռները: Զօրքը կրակահերթերով շարքից հանել է Կապանի հեռուստաաշտարակը, խափանուել է նաեւ Դաւիթ Բէկ գիւղի անդրադարձիչը:

Գորիսից հրասայլերի մի շարասիւն է շարժւում դէպի Կապան:

Զէնքի փորձարկման ժամանակ վիրաւորուել են 6 եւ զոհուել է մէկ մարդ՝ Համլետ Քոչարեանը:

ԱՐՏԱՇԱՏ - Ժամը 12:00: Ամբողջ գիշեր եւ առաւօտեան Երեւանից դէպի Արտաշատ գնացող ճանապարհին եւ Արտաշատ քաղաքում կատարւում են զինուորական տեխնիկայի եւ զօրքի տեղաշարժեր: Գիշերը դրանք ուղեկցւում էին հզօր լուսարձակներով: Զինուորները լրիւ սպառազէն են եւ մարտական առաջին պատրաստականութեան:

Կիրովական - Մայիսի 7ի առաւօտեան միլիցիայից ստացուած չճշտուած տուեալներով, Ոսկեպարում վիճակը շատ ծանր է, պահակակէտերից տարանջատւում են հերթապահները, կայ լուր, որ գիւղում գտնուող միլիցիայի ջոկատը յանձնել է զէնքը, 6 պատանդ է վերցուել: Երկրապահ ջոկատը (բոնցքամարտիկ Սամսոն Խաչատրեանի ղեկավարութեամբ) դեռեւս ոչ մի տեղեկութիւն չի հաղորդել իր մասին:

Երէկ ժամը 15ին Կիրովական բերեցին յատուկ գնդի վաշտի զինուոր՝ 23 ամեայ Իւրա Թամազեանի դիակը, որը զոհուել էր Զուջաան-Դոստլու (Բարեկամաւան) հատուածում, առաւօտ լուսադէմին: Սահմաններից ետ են քաշուել «Նժդեհ» ԱԻՄի եւ «Զօրաւար Անդրանիկ» ջոկատները: Այսօր պատրաստւում էր այնտեղ մեկնել Կիրովականի միլիցիայի նոր ջոկատը:

Կիրովականի ՀՀՇ վարչութեան անդամները եռանդուն լուրեր են տարածում, որ ամբողջ Հայաստանում դեսանտ են իջեցնելու, այդ թւում նաեւ Կիրովականում: